ՓՈՒՆՋ

ԹԻՒ 745 — ՇԱԲԱԹ — 1872 ՀՈԿՏԵՄԲԵՐ 7

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Քանի մ՚օր յառաջ Սպանիայէն եկած հեռագիրք նոր ապստամբութեան մի ծագումն հաղորդելով, կասկած կուտային թէ այս երկիրը գարձեալ տակն ի վերայ պիտի լինի, բայց վերջին տեղեկութիւնք՝ ի դերև կհանեն այս կասկածն, ծանուցանելով թէ ապստամբութիւնը չէ կրցեր իւր ծագման տեղէն յառաջ երթալ, և թէ կառավարութիւնը կ՚յաջողի կատարել ապստամբական այս նոր եղջիւրները, և երկրին խաղաղութիւնը անվրդով կմնայ եթէ ուրիշ կողմանէ նոր ցոյց մի չըլլայ։

* * *

Սպանիայէն յետոյ աեսութեան արժանի կհամարուի Գաղղիոյ Հասարակապետութեան նախագահ Պ. Թիէրի մեկ խօսքը, որ Իտալիոյ կվերաբերի և հետևաբար Իտալիոյ լրագրոց դիտողութեանց և Իտալացւոց խօսակցութեանց նիւթ մ՚եղած է այս օրերս։

Պ. Թիէր Իտալիոյ վրայ խօսած աեսնը, ըսեր է թէ «Իտալացւոց ոմանք՝ հակառակ վիքթոր Էմմանուէլի և իւր պաշտօնէից առ Գաղղիա ունեցած ընթացից, Գաղղիոյ դէմ այնպիսի գաղափարներ կկրեն, որոնք կրնան ցրտութիւն ձգել երկու կառավարութեանց մէջ»։

Ինչպէս Իտալական Երեւելի լրագիր մի դիտողութիւն ըրած է, ոչ միայն Իտալացւոց ոմանք այլ և ամենքը իրաւունք ունին հակակրութիւն ունենալ եթէ ո՛չ բոլոր Գաղղիոյ գէմ նորա նախագահին դէմ, քանի որ կտեսնեն թէ նախագահական սեռոն անցած տաեսնը քահանայապետական երկրին Իտալիոյ հետ միանալուն և Պապին աշխարհական իշխանութեան բարձման համար խօսելով «այսպիսի գործողութիւնք անընդունելի են» ըսած է։ Հայրենասէր Իտալացիք կրնա՞ն անտարբեր մնալ այս պաշտօնական յայտարարութեան վրայ, և մի՞թէ մեղադրելի՞ են երբ հաշտ աչօք չնային Գաղղիոյ վրայ։

Շատ հաւանական է, որ եթէ Գաղղիա այժմ նկատն վիճակի մէջ չգտանուէր, և ներքին կարգադրութեանց հոգերով զբաղեալ չլիներ, Պ. Թիէր առաւել յանդրութեամբ պիտի խօսէր Իտալիոյ գէմ, և թերևս հրայանի ծայր ցուցներ։

Սակայն կա՛յ ուրիշ խնդիր մի. տեսնե՛նք թէ ինչպէս պիտի վերջանայ։ Իտալիոյ կառավարութիւնը շատ ժամանակէ հետէ գեսպան մ՚ունի Գաղղիոյ կառավարութեան քով, և մինչև յարդ ո՛ր և է պակասութիւն դրուած չէ վրան։ Պ. Թիէր այժմ յանկարծ կամբասանէ զնա իբրև գաղափարակից Նօթոլեոնեան կուսակցութեան, և կառաջարկէ ձգել պաշտօնէն։

Իտալիա պիտի հաճի՞ ընդունիլ այս առաջարկութիւնը, և դեսպանը չպիտի բաղդքէ իւր վրայ եղած պաշտօնական այս ամբաստանութեան համար։ Հեռագիր մի քանի մ՚օր յառաջ Յանոյց թիէրի դիտաւորութիւնը, բայց ի վերջոյ նոր տեղեկութիւն մի չեկաւ։

ԱՋԳԱՅԻՆ

Ա. յս չաբթու հետեւեալ որոշումներն ըրած է ազգային վարչութիւնը։

1. Կարնոյ սրբազան Առաջնորդէն և Բաղ. Ժողովէն հասած գրութիւններէն տեղեկանալով կեդրոնական վարչութեան Բաղ. Ժողովը թէ՝ Պատրըմաճեան խաչատուր էֆէնտիի խանին այրելը և յետոյ սպանուիլը՝ դիտմամբ գործուած եղեռնագործութիւններ են, և թէ նոյն կողմերը գանուած Հայոց ընչից և կեանց ապահովութիւնը վտանգի մէջ է, որոշեց անմիջապէս թաղերը գրել, և յանցաւորները գտնել և պատժելու համար ազգու հրամանագիր մը խնդրել։

Սոյն թաղերը Ս. Պատրիարք Հայրը անձամբ պիտի տանի, ինչպէս նաեւ գաւառական հարստահարութեանց ընդհանուր տեղեկագրին մեկ օրինակը եւս։ Ս. Պատրիարք Հօր պիտի ընկերանան քանի մը սրբազան եպիսկոպոսունք։

2. Բաղիշու առաջնորդ Գեր. Մամբրէ վարդապետին խնդրոյն քննութիւնը յատուկ յանձնաժողովի մը յանձնուեցաւ, որ պիտի դումարի յառաջիկայ երկուշաբթի օր՝ ի Պատրիարքարան։

3. Նախորդ պատրիարքական տեղապահ Ամեն. Արիստակէս սրբազան Արքեպիսկոպոսի նիւթական-պիտոյից համար, որոշուեցաւ ամեն ամիս 700 դրուշ կեդրոնական անտուկէն վճարել ցմահ իւր, Ս. Խաչ եկեղեցւոյ անտուկէն սահմանուած 300 դրուշ ամսականը շարունակելու մասին հրահանգ դրկելով Ս. Խաչ եկեղեցւոյ Թաղ. խորհրդին։

4. Ծնեոսական խորհուրդէն եկած և դրամական խնդրոյ վերաբերեալ չորս կտոր տեղեկագիրները քննելով, պարտ ու պատշաճ տնօրէնութիւնն ըրաւ։

5. Խզմիրի Բաղ. Ժողովին դրոյն պատասխան տրուեցաւ թէ, առաջնորդի ընտրութիւնը բուն Յահմանադրութեան, գաւառական Ընդհանուր Ժողովին կվերաբերի, և առաջնորդական տեղապահի ընտրութիւնն ալ՝ գաւառական կրօնական և Բաղաքական խառն Ժողովին. և բուն պրուժ այժմ Աբժ. Գէորգ վարդապետի մասին միայն Բաղ. Ժողովոյ կողմէն հաճութեան գիր եկած է, և նրօնական Ժողովին կարծիքը կպակսի, հետևաբար Յահմանադրութեան համաձայն է։ Նոյնպէս գաւառական Ընդհանուր Ժողովոյ կազմութեան վրայ տեղեկութիւն չունենալով այս մասին պէտք եղած տեղեկագիրները, պարտին ժամ յառաջ կարկել կեդրոնական վարչութեան՝ ի վաւերացումն, որպէս զի իրենց պաշտօնական գիրքն ընդունուի։

Անցեալ շաբաթ աւուր թերթով ծանուցինք, Պրուսայու վիճակին մէջ սահմանադրութեան գործադրութեան համար ընտրութեանց սկզբնաւորութիւն լինելն։

Ահաւասիկ, վերջին նամակներէ կիմանանք, թէ Պրուսայու եկեղեցական ու աշխարհական երեսփոխանաց ընտրութիւնը կատարուեր է, և դիւղերն ալ յատկապէս չորս հոգի ղրկուեր են՝ իրենց երեսփոխանաց ընտրութեան համար։

Պրուսայու նորընտիր երեսփոխանք են, (քուէից կարգաւ)։

Եկեղեցականք՝		քուէ
Տ. Արիստակէս վրդպ. Վանքեան		9
Տ. Եփրեմ քահանայ		7
Տ. Սահակ	»	7
Տ. Մելքոն	»	6
Աշխարհականք		
Ստեփան էֆէնտի Պաթմաղեան		748
Յովհաննէս	» Թաշճեան	692
Յարութիւն	» Օրագեան	670
Յովհաննէս	» Աղամճանեան	663
Յովհաննէս	» Տ. Նիկողոսեան	663
Մ. Սարգիս	» փափազեան	631
Գրիգոր	» Ֆիլիպէեան	621
Մ. Յովհաննէս	» Ղուկասեան	600
Մ. Բիւզանդ	» Եավրիեան	587
Յովակիմ	» Յովակիմեան	579
Մ. Կարապետ	» Եավրիեան	548
Մ. Աբգէն	» Յովակիմեան	546
Մ. Յակոբ	» Ֆընտըգեան	519
Մ. Յովհաննէս	» Քէօլէեան	451
Մ. Թագւոր	» Ամիրայեան	451
Յովհաննէս	» Կարապետեան	434

1200 քուէթուղթ բաժանուեր է, և 810 քուէ եկեր է։ Եթէ այսչափ քուէթուղթ Պօլսոյ մէջ բաժնուեր, հաշիւ 100 քուէ կուգար։ Վերջին օրերս Պօլսոյ մէջ չէ՞ որ 10–20 քուէով երեսփոխաններ կընտրուին։ Ահա՛ պրուսայիք, ինչպէս կաղաղակէին, արդարև սահմանադրեաեր են առաւել քան ըզ պօլսեցիս, որ կպարծին թէ սահմանադրութիւնը Պօլսէն եղած է։

Վստահ եմք, թէ Պրուսայի ազգայնոց խաղաղութիւնն ու օրինաւորութիւնը այսպէս վերահաստատուելէն յետոյ, մօտերս առաջնորդական խնդիրն բոլորովին կվերջանայ։ Ի շնորհս խաղաղասիրութեան գաւառական նորընտիր երեսփոխանաց, և գերապատիւ Տ. Բարթողիմէոս Ս. Արքեպիսկոպոս Կդառնայ Պրուսա իւր սիրելի ժողովրդեան քով։

Ա. Ա. Ղազարեան և Ա. Ղազարեան Ա. Ղազարեան
Ա. Ղազարեան Ա. Ղազարեան

Ա. Ղազարեան և Ա. Ղազարեան Ա. Ղազարեան Ա. Ղազարեան

ցածն է, մանաւանդ պէտք էր յիշել վեհ. կաթողիկոսը՝ թէ ինքն Պօլիս եղած ատեն ուղեց որ Սսոյ և Աղթամարայ կաթողիկոսաց խնդիրն իրեն յանձնուի։ Երեսփոխանաց ժողովոյ մէջ ալ մեծ զօրութիւն ունէր, բայց ժողովուրդը չհողուցին»։ Պ. Մասի՛ս, այս պարբերութիւնդ ծայրէ՝ի ծայր վրպարտութիւն և սուտ է, լսէ՛ որ ճշմարտութիւնը ուսուցանեմ։ կաթողիկոսը ամենևին ինքնին չէ ուզած որ Սսոյ և Աղթամարայ խնդիրը էրեն յանձնուի և ժողովուրդը նպաստած չլինին։ Պէտք է գիտնաք որ կաթողիկոսը իւր կեանքումը կուսակցութեան մարդ եղած չէ, որ կըսէք նաև թէ էր կոմիտէներուն չէրցաբնել։ Այլ երբ պօլիս եկաւ վեհափառը, յայնժամեան պատրիարքը ինքը պատկառելի մի ծերունի, Հայաստանեայց եկեղեցւոյ հաւատարիմ Արք եպիսկոպոս մը, չեմ յիշեր թէ առաջինն թէ երկրորդ անգամ տեսութեան գալոյն՝ի բերա առաջարկեց վեհ. հայրապետին թէ մեք անհամբեր ոգւով կ'սպասէինք մի օր յառաջ Պօլիս գալուդ, մանաւանդ Սսոյ և Աղթամարայ խնդրոյ համար որ իրրև ընդհանուր Հայրապետ ամենայն Հայոց Ձեր վերջնական վճիռը տաք, և ամեն մարդ լռէ։ քանզի ազգայիններէն՝ երկուքի բաժանած, Նիկողայոս և Խաչատուր պաշտպանները գտած, մեծ վտանգ առաջի կայ Ազգիս համար, չատ անձինք պիտի կորնչին եկեղեցին, կրօնափոխութեան պատրաստուածները կը լսեմք ևն։ Բայց եթէ դուք Ձեր հայրապետական իշխանութեամբ վճռէք, ամէն բան կվերջանայ։ Ինչ պատասխանեց վեհափառը, գիտէ՞ք. «ես տեղեակ եմ. ասայ, ըստ ամենայնի Ձեր համագումար ժողովոյ վճռոյն Նիկողայոսի և Խաչատուրի համար, և ես ինքս համաձայն եմ, շատ լաւ վճռեր է՛ք, ուրեմն գործադրեցէ՛ք, նոր վճռոյ կարօտութիւն չկայ։ եթէ Ձեր վճիռը ես բապօրինաւոր դատէի, ըստ Ձեր առաջարկութեան նոր ժողով գումարելով նոր վճիռ մը տալու կհարիւադրուէի։ Բայց քանի՛ որ ես ինքս ալ հաւանած եմ այդ վճռոյն, վերջացած է ամենայն ինչ։ Գրեցէ՛ք վիճակայնոցը, թող արժանաւորներ ընտրեն ևն։ Բայց յաւելցուց, մեր պատրիարքութեան ժամանակ յազգայնոց ոմանք ցանկացին Սսոյ և Աղթամարայ վիճակաց օրինաւոր յարաբերութիւն հաստատել ընդ Մայր Աթոռոյ, և ես պատրիարք էի, բանակցեցայ ընդհանդուցեալ Մատթէոս կաթողիկոսի, նորա չհաճելով լինչ լինչ խնդիրս, դործը անաւարտ մնաց. արի՛ դու այսօր պատրիարք ես և ես կաթողիկոս, եպիսկոպոսաց յանձնաժողով մի կազմէ՛. օրինաւոր յարաբերութեան կանոններ չինուի քանի որ՝ի Պօլիս եմ, այդ Նիկողայոսի և Խաչատրոյ խնդիրն ալ լինքնին կը լուծուի ևն։

Թէև դժուարութեամբ յանձնաժողովը կազմեցաւ, մի քանի կանոններ դրուեցան, բայց գործը չկայացաւ։ Ասել է՝ Մասի՛ս, Ձեզ համամիտ եղող մի քանի անձինք որ ժողովուդ կանուանէք, արգելք եղած լինին յայնժամ Ս. Պատրիարքին։

Մնացեալն յաջորդով

. . . Խմբագիր

Սըզերդի առաջնորդական վիճակ՝ ըստ որոշման կեդրոնական վարչութեան, դառնալու պատրաստուած միջոցիս, խոստանալով Սըզերդի 24 գիւղօրէից մէջ Անձնուէր ընկերութեան չնորհիւ բացուած և այժմ գոյուած վարժարանները կրկին բանալ, գաղ. ժողովոյ Մեծ. անդամք փութացին դիս քաջալերել բանիւ և արդեամբ և բարեհաճեցան նուիրել դրամ և գիրք։

կարապետ էֆ. Գարակէօղեան 5 օս. ոսկի
Բարսեղ » Հալաճեան 5 » »
Մինեքերիմ » Մանուկեան 2 » »
Մահփան » փափազեան 100 քերականութիւն։

Նաև հետևեալ բարեսէր անձինք ալ նուիրեցին դրամ և գիրք։

Մի.քայէլ էֆ. Ցակոբեան 2 օսմ. ոսկի
Սիմոն » Մանուէլեան 1 » »
Ռուբէն » Գրիգորեան 2 գաղ. »
Գէորգ » Զօպանեան 50 քաղաքական տնտեսութիւն։

Վերոյիշեալ դրամներով դպրոցական 500 ի մօտ մեծ և փոքր գրեանք ծախու առնուելով կը մնկնիմ՝ի Սըզերդ, և թէ՛ իմ և թէ՛ Սըզերդի ուսումնատենչ ազգայնոց չնորհակալութիւնը կը մատուցանենք նուիրատու Մեծ. ազգայնոց, խնդրելով ամենայն ազգասէրներէ որ բարեհաճին մեր ազգատ հեռաւոր և ուսման խիստ կարօտ ժողովրդեան մտաւոր զարգացման համար գիրք, թուղթ. գրիչ նուիրելու. որպէս զի Անձնուէր ընկերութեան չնորհիւ աւելի ընդարձակուի Սըզերդի և չրջակայից մէջ բնակող քիւրտահօս ազգայնոց մէջ ազգային լեզուի ուսումը և ազգային դաստիարակութիւնը։

1872 Հոկտ. 6
Կ. Պօլիս։

Պետրոս Վարդապետ տէրեան
Սըզերդա և վիճակաց Նորին

ԽԱՂՈՂ ԼՈՒՐԵՐ

Ա.յս անգամ Պօլսոյ և չրջակայից մէջ քաղաքապետութիւնները կազմուեցան, և նոցա նախագահ անուանեցան հետևեալք։

Էմիրկէն.— Մուխլիս փաշա՝ նախկին կուսակալ Տրապիզոնի։

Պէյլէրպէյի.— Սալիհ էֆէնտի՝ նախորդ նախագահ կեդրոնական դատարանին Սէլանիկի։

Ֆաթիհ.— Ահմէտ Աթա պէյ՝ նախկին կառավարիչ Գարասիի։

Ադսէրայ.— Բաչիտ էֆէնտի՝ նախկին վերատեսուչ մաքսատան Իզմիրի։

Իսկիւտար.— Րէմզի էֆէնտի՝ նախկին նախագահ կեդրոնական դատարանին Ամասիոյ։

Այա-Սոֆիա.— Իզզէթ էֆէնտի՝ որ եղումտիյ պաշտօնատան հաշուական ժողովոյն անդամ էր։

Պէյօղլու.— Մուխթար պէյ։

Պէօյիւքտէրէ.— Արիսթիտի պէյ՝ նախկին տնօրէն օսմանեան Պանքային։

Պէչիկթաչ.— Նէճիպ փաշա՝ որ նախադամ էր ժողովոյն Րումելիոյ։

Գասըմ-փաշա.— Ասիմ փաշա։

Գատըգիւղ.— Ցախրի պէյ՝ նախորդ գայմագամ Կէմլէյէկի։

Պէյքօզ.— Պէտրի պէյ՝ որ անդամ էր ժողովոյ քաղաքապետութեան Պօլսոյ։

Կղզիք.— Բանճիրի էֆէնտի։

Էյուպ.— Հաճի՝ Նուրի էֆէնտի՝ որ անդամ էր ժողովոյ քաղաքապետութեան Պօլսոյ։

Պրազիլիոյ կայսեր կողմանէ պատուանշան ղրկուեր է եգիպտոսի բարձրապատիւ Խտիվին։

— Ոստիկանութեան գործոց նորընտիր պաշտօնեայ Ալի Սայիպ փաշա երէքշաբթի օրը մայրաքաղաքս հասնելով, մեծ եպարքոսին և պինուորական գործոց պաշտօնեին հետ տեսնուելէն յետոյ՝ իւր պաշտօնն սկսաւ վարել։

— Ազիզիյէի և Շիրքէթի-Խայրիյէի չոգենաւներէն մէկ մէկ հատ այսուհետև առտու և իրիկուն քանի մ'անգամ պիտի երթևեկեն կամուրջէն Հայատար-փաշայի նաւահանգիստը, ուր է իշմիտի երկաթուղւոյն կայարանը։

Շիրքէթի-Խայրիյէ մինչև Հայատար փաշա 40 փարայ առնելուն համար, Ազիզիէն ալ սկսեր է 40 փարայ առնուլ։ Այս երկուքին մրցումը Գատըգիւղի բըռնակաց համար չատ օգտակար կըլլայ. որովհետև մինչև հիմա Գատըգիւղցիք չոգենաւուն հասարակ տեղին համար՝ 60 փղ. իսկ Մէվգըի համար 2 ղ. կվճարեն. իսկ այսուհետև խիստ չատերը յիշեալ չոգենաւներով պիտի երթան Հայատար-փաշա, ուսկից չատ մօտ է Գատըգիւղ։ Հետևաբար պիտի ջնաստւի Ազիզիյէի տեսչութիւնը, և առաւել մրցելու պիտի ելնէ Շիրքէթի-Խայրիյէի հետ, և չատ հաւանական է, որ ինչպէս երբեմն Տրապիզոնի համար քանի մի չոգենաւք գրցելով ճամբորդներէն ստակ չառնելէն զատ, ետևը եփեցին և խնճոյք ալ տուին, նոյնպէս այս երկու չոգենաւուց վարչութիւնք Գատըգիւղի և Հայատար-փաշայի համար ստակ չառնելէն զատ, այժմ կէս կէս օխայ ընտիր խաղող և ձմեռը մէկ մէկ տաք տաք ըմպելիք ալ վրայ տան ճամբորդներուն։ Սակայն, թէ մինչև այս աստիճան ալ չելնեն, հարկաւ պիտի ստիպուին գիներն տարապայման զեղչել։

— Սոյդ է, թէ Պօլսոյ ծխախոտի մենաւաճառի արտօնութիւնը չնչելու որոշումն ըրած է Բ. Դուռը, բայց տակաւին ի պաշտօնէ հրատարակուած չէ և հետևաբար դէտերը կշարունակեն իւրեանց պաշտօնը և արտօնատեարց աչքը մնալ կուզեն գոնէ վերջին օրերս, որովհետև մինչև ցարդ չկրցան փախըստական ծխախոտներ ձեռք բերել, կամ՝ փոնածնին առնել չկայծողեցան, զորաւոր ձեռաց մէջ գտնելնուն պատճառաւ։

Ահա՛ դէտերէն մէկը մեծ փախուստ մի բռներ է։ երէքշաբթի օրը ողորմելի մարդ մի պատի մը քով քաշուած՝ թաշկինակի մի մէջ քիչ մի ծխախոտ չորցուցած ատենը, դէտը վրայ հասեր և գրաւել ուզեր է. խեղճը դիմադրեր է յայտնելով թէ ինքը մուրացիկ մ'է, և թէ՝ սիկառներու մնացորդները փողոցներէն ժողված է խմելու համար. սակայն դէտը մտիկ չընելով ուզեր է գը-

բաւել, և երկու կողմանէ ձայները բարձրանալով անցորդք խառներ են և ճամբաները են զդէտը, յանդիմանելով թէ իւր պժգը այնպիսի թշուառ մուրացկանի մը վրայ թափել կուզէ։

— Պուլղարաց Էքզարքը Բ. Դրնէն պուլղար լրագրի մի հրատարակութեան համար արտօնութիւն խնդրեր է, անշուշտ յոյն լրագրաց գրական յարձակմանց դիմադրելու նպատակաւ։

— Երեքշաբթի կէս գիշերուան մէջ եկեղի գիւղ Ալի Բիզա էֆէնտիի տունը չորս խրլաթի մտնելով, էֆէնտիին պատկած սենեակը մտեր, և մէկ երկու թեթեւ վէրքեր տալէն յետոյ՝ 150 հազար ղրուշի բան և մնտուկ մի առեր դնացեր են։ Տեղական ոստիկանութիւնն իմանալով անմիջապէս գողերուն ետեւէն ինկեր է, բայց անոնց ճամբուն վրայ միայն գողցած մնտուկնին գտեր է և ա՛յն ալ պարապ։ Ոստիկանութեան պաշտօնատան ծանուցուած ըլլալով խիստ խուզարկութիւն կըլլայ։

Կայսերական պալատան հինգերորդ և վեցերորդ քարտուղարք Ձգուեցան իրենց պաշտօններէն։

— Ջինուորական Ժողովոյն անդամ անուանեցաւ Ջէմիլ փաշա, որ ասկէց յառաջ ալ վարած է այս պաշտօնը։

— Օգոստափառ Սուլթանը մխիթարական հեռագիր մ'ուղղեց առ կայսր Գերմանիոյ, կրտսեր եղբօրը մահուան համար։

— Առաջիկայ հինգշաբթի օրը Ֆաղիլ Մուսթաֆա փաշայի օրիորդին հետ արտաքին գործոց պաշտօնեայ խալիլ փաշայի ամուսնութեան հանդէսը պիտի կատարուի։

— Խրխրաքի և Զարիֆի էֆէնտիները տարեկան 400 ական լիրա յատկացուցեր են յունական պատրիարքարանին, յօգուտ ազգին գործածելու պայմանաւ։

— Մայրաքաղաքիս անդրկական դեսպանին տիկինը տեսնելով որ անուսկին ամեն օր քանի մը լիրա կպակի, գըտնուած լիրաներուն վրայ անկշռելի կերպիւ մէկ մէկ նշան ըրեր է. և քանի մ'օր յետոյ կատածելի ապաուրէն յանկարծ 5—10 լիրա ուզեր է. տուեր է ապասաւորը, և տիկնոջ կատածն հատուցեր է տեսնելով որ բերած լիրաները իւր ըրած նշանն ունին։ Դարձ անմիջապէս ոստիկանութեան բանտը գտեր է ինքզինքը։

— Հինգշաբթի օրը Թրամվայի կառաց մէկը Սալգըմ-սեօյիւտի ճամբուն վրայ յոյն կին մի կոխատած և մէկ ոտքը կտրած ըլլալով, խեղճը անմիջապէս մեռաւ։

Հապէշստանի Թագաւորն Եւրոպիոյ կառավարութեանց և մանաւանդ պէս Անգղիոյ կըղրքէ յատուկ պաշտօնակալի մի մէջտեղ, ընդդէմ իշխանութեան Եգիպտոսի, յայտարարութիւն ընելով թէ եգիպտական իշխանութիւնը Հապէշստանէն գրաւած է 800 հազար բնակիչ ունեցող երկիր մի։

— Գերմանիոյ կառավարութիւնը ոչ լաշէր է, 300 անգղիական լիրայէն վար տարեկան ունեցող քաղաքական ու զինուորական պաշտօնակալաց՝ 100 ին 15 աւելի տալ. իսկ 300 էն վեր եղող տարեկաններուն՝ 100 ին 10 ը աւելցունել։

Անգղիոյ կառավարութիւնն ալ ազգային ժողովոյն պիտի առաջարկէ աւելցունել պաշտօնակալաց տարեկանները։

— Առաջիկայ նոյեմբեր ամսոյ մէջ Սաքսոնիոյ Թագաւորին ամուսնութեան հանդէսը պիտի կատարուի, և ներկայ պիտի գանուին Աւստրիոյ և Գերմանիոյ կայսերք։

— Գերմանիոյ կառավարութիւնը Պերլինի վաճառականաց ծանուցեր է, թէ կայսերական գանձը քիչ տոկոսով փոխ առակ կուտայ պատուաւոր վաճառականաց։

— Հոլանտայի վարչութիւնը, Պերլինի մէջ երեք կայսերաց ըրած տեսակցութենէն յետոյ, զինուորական պատրաստութեանց եռեւէ եղած է։ Որուշեր է նորահնար զինուց փոխել հինները, և ամրութիւններն նորոգել ու ըզօրացնել։

— Գաղղիոյ կառավարութիւնը յատուկ մասնաժողովոյ մի քննութեամբ իմանալով թէ նաւարանաց և չոեմարանաց մէջ բազմաթիւ անպէտ թնդանօթներ, հրացաններ և պատերազմական ուրիշ գործիքներ կգտնուին, – մտադիր է ծախել զանոնք, և գոյացած արդիւնքը նոր տեսակ զինուց և ամրութեանց համար գործածել։ Բանի մ'ընկերութիւնք արդէն կառաջարկեն 2 միլիոն անգղիական լիրա տալ՝ անպէտ համարուած զինուց համար։

— Յունաստանի կառավարութիւնը՝ որ Թագաւորութեան հաստատութեան առեներ լինչպէս Ռուսիոյ և Գաղղիոյ այնպէս Անգղիոյ կառավարութենէն ի փոխ առակ առած, և մինչեւ յարդ ա՛չ տոկոս և ա՛չ դրամագլխէն մաս մի վճարած չեր, այս օրերս 9 հազար լիրա վճարեր է Անգղիոյ՝ ի հաշիւ անվճար տոկոսին։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

դրուրուշ

Խանվէ	100 օխ.	1180—1300
Շաքար փոշի	կէնդ.	245—253
» գլուխ	»	295—300
Յորեն կարծր Բումիլի քոռը		28—29
» » Անատօլու	»	27—29
» կարուղ Բումիլի	»	26—30
Աֆիոն	օխ.	350—360
Ձէհրի ըսա սեռակին	»	15—13
Բուրդ, Անատ. լուացուած	»	17—17½
» » չլուացուած	»	9—9½
» Բումիլի լուացուած	»	17—17½
» » չլուացուած	»	10½—11
Թիֆթիկ էֆենտիւրիւ	որոշ գին չկայ	
Բամպակ, կէրվէ	»	8—8¾
» Ատանա	»	7—7½
» Վրաստանի		7
» Պարսիկ		6

ՀՐԱՊԱՐԱԿ ՊՕԼՍՈՑ

	ղր.	ԼՐ.
Գոնսոլիտէ	58	14
Թրամվայի բաժնետոմս	1410	
6% ի փոխառութիւն	ֆր. 363	
6% ի » »	357	
6% ի » »	341	50
Բումիլը երկաթուղւոյ բաժ.	179	

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

ԵԱՏԻԿԵԱՐ

ԵԱԽՕՏ

ԳՐԱԱԹՐ ԷՐՄԷՆԻԱՆ

ՄՈՒՀԻՄՄ ՎԷ ՄՈՒԽԹԱՍԱՐ ՀԻՒԵԱՑԵԼԷՐ.

Սոյն «Եատիկեարը» այլ և այլ մատենագիրներէ առնուած մանր մունր պատմութեանց և շահաւէտ գրուածոց ժողովածոյ մ'է, Հայ գերեզմ և պարզ տառիկերէն լեզուաւ, որ մաս առ մաս հրատարակուելով, կը ծախուի Հայ գըրատուներէն ի գին 40 փարայ։

Ցաղագրութիւն պատրիարքին Երուսաղէմի ցակոբայ պետրոնեղբայր առաքեալ ինչ ցիշատակ. և շարականք Հայաստանեայց Սրեկեղեցւոյ հովուապետից ի Սբբոյն Թարգմանչէ Բարերուպղեսէ ինչ ցՄատրէն Գրիգոր Լուսաւորչէ հայրն մեր։

Այս ընտիր գործ՝ որուն մէջ բաւական հնութիւններ ալ կպատմուին, և զոր աշխատասիրած է Երուսաղէմի միաբաններէն Արժ. Բառնաբաս վարդապետը, այժմ Գալաֆեան եղբարց տպարանէն ի լոյս ընծայուած, կգտնուի ամեն գրավաճառաց քով ի գին 5 ղրշ.

Ամերիքան տիչ Թատիպլէրինատէն օրըստ եիկիրմի սենէտէն պէրու Տէրի սաատէթտէ քէսսէլ չերիֆ էյլէյէն Ս. Խաչատուրեան վէ Կ. Սաեֆանեան նամ տօքթօրլար ազտը չիրքէթ իյլէյուզ, պուննան պէօյլէ Պահմէ – գափուսընտա Պողոսհամընդն գարչըսընտա նուժէրօ 3 մաղազասա տիչմէ օլան հէր կէօնա ամէնիսթէլըը իճրա իյլէմէքտէ տիրլէր. վէ Ս. Խաչատուրեան սալը կիւնլէրի սաաթ պիչի տէք Գասը–քէօյտէ միւսիւ Փօլըն էճզաճանէսինտէ վէ փազար կիւնլէրի իսկիւտարտա Սէլամըզ Ճատտէսի քէնտի խանէսինտէ, վէ Կ. Սաեֆանեան տաիի փազար կիւնլէրի եէնի–դափու եօլտա Լանիա Ճատտէսի նուժէրօ 16 քէնտի խանէսինտէ սաաթ եէտիյէտէք պուլունմազտա օլտուղլարը–նը իպտալ էթլու միւխթէրիլէրինէ իլան խէրլէր։

ՊԱՅՄԱՆՔ ՓՈՒՆՋԻ

1. –Փունջը ՁՈՐԵԿՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

2. –Տարեկան բաժանորդագինն է միայն չորս արծաթ մէճիտ՝ կանխիկ վճարելի թէ մայրաքաղաքին և թէ արուարձանաց և թէ գաւառաց համար։

3. –Վեց և երեք ամսոյ համար ալ բաժանորդ կընգունուի։

4. –Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախքը համբագրութիւնը պիտի վճարէ։

5. –Չաւը 40 փարայ է, և կգտնուի ամէն Հայ գրավաճառաց խանութներէն և ձեռքէ ծախողներու քով։

6. –Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար։ Աւելի ալ կընայ աւելի անգամներու համար։

7. –Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի աւ Տնօրէն-Տէր Հ. Ս. Աւագեանի, Կ. Պոլիս Քիւրքճի խան վարի յարկ թիւ 26։

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
Հ. Ս. ԱՒԱՁԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԷՓ ԳԱՎԱՁԵԱՆ
Կ. Պոլիս Քիւրքճի խան վարի յարկ թիւ 26։